Հովհաննես Թումանյան

Գաղթականի երգը

Կրոունկն երկրնքում ճամփա կրհանի,
Կր՛ռ, կր՛ռ, ձեն կուտա էն խավար ամպում.
Ղարիբ մոլորել՝ չիտե, ինչ անի
Անգութ աշխարհքում, անծանոթ ճամփում:

Ա՛խ, էս սև ճամփեն, էս դրժար ճամփեն
Արդյոք ո՞ւր կերթա, արդյոք շա՞տ մընաց.
Ո՞րտեղ կրհատնի էս օրը արդյոք,
Ո՞րտեղ կրհանգչեն ոտներրս հոգնած:
Է՛յ, բարով գնաս, սիրելի թրոչուն.

Գարուն կրբացվի, ետ կուգաս կրրկին,
Ձագով-ընկերով կուգաս դեպի տուն՝
Քո բունը հերվան, չինարու գրլխին...
Ա՛խ, ես բրնավեր, ընկած սարե-սար,
Ու քաշ եմ գալի, ու քաշ եմ գալի,

Անքուն ջրի պես դիպչում քարե-քար,
Անշունչ քարին էլ երնեկ եմ տալի:
Ամեն քար, աստվա՛ծ, իր տեղն է անժաժ,
Հենց ես եմ մենակ տեղից գրլորվել.
Ամեն հավք, անգո՛ւթ, իր բունը ունի,

Հենց ես եմ դարիք ճամփում մոլորվել...
Ա՛խ, էս սև ճամփեն, էս դըժար ճամփեն
Արդյոք ո՞ւր կերթա, արդյոք շա՞տ մընաց.
Ո՞րտեղ կը հատնի էս օրը արդյոք,
Ո՞րտեղ կը հանգչեն ոտներըս հոգնած...

1896